# ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱՀԱՅՐԸ

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԾՆՆԴՅԱՆ 1605-ԱՄՅԱԿԸ



Քերթողահայր կամ Պատմահայր Մովսես Խորենացին ծնվել է 410 թվականին Հայաստանի Տարոն գավառի Խորոն գյուղում: 15-16 տարեկան հասակում ուսանել է Վաղարշապատում, որտեղ դասավանդում էր Սուրբ Մեսրոպը: Հավանաբար 432-434 թվականներին Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը մի քանի այլ աշակերտների հետ Մովսեսին ուղարկում են Ալեքսանդրիա՝ բարձրագույն ուսում ստանալու: Այստեղ հայ ուսանողները աշխարհահռչակ մատենադարանում հնարավորություն են ունենում կարդալու հույն բանաստեղծների, փիլիսոփաների, պատմագիրների և այլ գիտնականների գրվածքները:

5-6 տարի ուսման մեջ կատարելագործվելուց հետո, հայ ուսանողները վերադառնում են հայրենիք և վախճանված գտնում իրենց երկու հոգևոր հայրերին և լուսավորիչներին՝ Սահակին և Մեսրոպին: Այս մասին Խորենացին սրտառուչ կերպով գրում է իր "Ողբ"-ում. "Մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեին իմ ամենիմաստ գիտությամբ և մենք էլ Բյուզանդիայից շտապշտապ դիմելով, հույս ունեինք հարսանիքում պարել... և առագաստի երգեր երգել,- այժմ այդ ուրախության փոխարեն գերեզմանի վրա ողբեր եմ ասում ողորմելի հառաչելով, նույնիսկ չհասցրի տեսնել նրանց աչքերի փակվելը, լսել նրանց վերջին ձայնն ու օրհնությունը":

Խորենացին գրել է "Ներբողեան Հռիփսիմեաց", "Ճառ Վարդավառի", "Թուղթ առ Սահակ Բագրատունի" և "Պատմություն հայոց" աշխատությունները:

Մովսես Խորենացին մահացել է 485 թվականից հետո:

### ՍԱՀԱԿԻ ԹՂԹԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ ԵՎ ԽՈՍՏՈՒՄ՝ ՆՐԱ ԽՆԴՐԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՅԼ ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

Մովսես Խորենացին մեր ազգի պատմության այս սկզբում դիմում է Սահակ Բագրատունուն. "Ուրախությամբ ընդունելով քո խնդիրը՝ սիրով կաշխատեմ այն կատարել, անմահ հիշատակ թողնելով այս քեզ և քեզ հաջորդող սերունդներին: Որովհետև նախնական և քաջ ազգ ես, արդյունավոր ոչ միայն խոսքի և պիտանի խոհականության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ փառավոր գործերով, որոնք մենք կհիշատակենք այս պատմության ընթացքում, երբ հորից որդի ծննդաբանությունը կապմելով՝ Հայաստանի նախարարությունների ազգաբանությունը կգրենք, ամեն մեկի որտեղից և ինչպես ծագելը համառոտ և հավաստի պատմելով, ինչպես որ կա մի քանի հունական պատմությունների մեջ:

Եվ մենք ասում ենք, որ մենք այս պատմության մեջ արդարախոս ենք եղել մեր դիտավորությամբ և ուղղամտությամբ: Իսկ ինչ (աղբյուրներից) որ հավաքել ենք՝ այդ Աստծուն է հայտնի. նրանք գովելի են, թե պախարակելի, այդ մեզ չի վերաբերում, մենք հեռու ենք դրանցից: Բայց պատմածների համաձայնությունը, և պատանիների ճյուղագրության մեջ թվերի հավասարությունը ցույց են տալիս մեր աշխատասիրության ճշմարտությունը:

* * *

Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խոհականդ և ուսուցանողդ. վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չափափառությունը:

Խղճում եմ քեզ Հայաստանյաց եկեղեցիդ, բեմիդ բարեկարդությունից անշքացած, քաջ հովվից և հովվակցից զրկված: Այլևս չեմ տեսնում քո բանավոր հոտը դալար տեղում և հանգիստ ջրերի մոտ սնվելիս և ոչ էլ փարախի մեջ ժողովված՝ գայլերից պգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում:

### ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՄՏՔԵՐԻՑ

Հասարակ լեզվով այս պատմություններն արի, որպեսզի մեր պատմածների ճշմարտությանը կարոտելով՝ հաճախակի և անդադար կարդան մեր հայրենիքի պատմությունը:

* * *

Թեպետ մենք փոքր ածու ենք՝ թվով շատ նվազ, սակայն մեր աշխարհում նս կատարվել են քաջության շատ գործեր, որոնք արժանի են գրավոր հիշատակի:

* * *

Պատմությունն ստույգ չէ առանց ժամանակագրության:

* * *

Ինչ մարդն ու նրա գործերն են, այն էլ նրա պատմությունն է: Նրանք մահկանացու ծնվելով՝ անմահ են թողնում իրենց հիշատակը:

* * *

Բանականության արդյունքը խոհականությունն է: Ուրեմն գեղեցիկ մտածողությամբ վառ և բորբոք պահելով քո խոհականության կայծը՝ պարդարում ես բանականությունը:

* * *

Կրթությունը ամեն ինչ է:

* * *

Անգրագետությունը մեծ չարիք է:

* * *

Նա (Մ. Մաշտոցը) ոչ թե սովորեցնում էր որպես արվեստ, աշակերտներին կարծես հոգի էր ներշնչում իբրև առաքյալ:

* * *

Մտքով՝ ստեղծող, խոսքով՝ պայծառ, հույսով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, ուսուցանելիս՝ անձանձրույթ:

* * *

Խոհեմ իմաստությամբ կարելի է հաղթել մեծ վորությանը:

* * *

Անգրագիտությունը ինչ բան էլ որ ձեռնարկի, կկործանի մարդկային կյանքի ամրությունը:

* * *

Իմաստությամբ մեծ վորությունը կարելի է հերքել, իսկ անկրթությունը մարդուն կարող է անհամար փորձանք բերել:

Մ. ԽՈՐԵՆԱՑԻ
"Հայոց պատմություն" գրքից

ՍԻՐԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ, շարունակվում է "Զարյա" թերթի վաղաժամկետ բաժանորդագրությունը 2015 թվականի 2-րդ կիսամյակի համար:

**Բաժանորդագրվել դուք կարող եք փոստատարների մոտ, գյուղերի կապի բաժանմունքներում կամ թերթի խմբագրությունում: Վեց ամիս ժամկետով բաժանորդագրության գինը կազմում է 348 ռուբլի 42 կոպեկ:**